ՀՀ ԿԳՄՍՆ «Մարտունու Տ. Աբրահամյանի անվան ավագ դպրոց» ՊՈԱԿ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա - Սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում

Դպրոց - «Խնձորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Ուսուցիչ - Լիլիթ Սահակյան

Ղեկավար - Կիմա Օհանեսյան

ՎԱՅՔ 2023

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն …….. 3
2. Աշակերտի ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը ……..…...….5
3. Ինքնուրույն գործունեության տեսակները ……..……7
4. Ստեղծագործական մտածողության մեթոդիկա ……..…..……..……12
5.Գործնական համատեքստ ……..……..……15
6. Եզրակացություն ……..……17
7. Գրականության ցանկ ……19

# Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից և արժեքային կողմնորոշիչներից մեկն է աշակերտների մեջ ինքնուրույնության և ստեղծագործական ունակությունների ձևավորումն ու զարգացումը: Այս որակները օգնում են անձին հետագայում ինքնադրսևորվել կյանքի բոլոր բնագավառներում: Սովորողները այս որակների շնորհիվ զարգացնում են իրենց ճանաչողական կարողություններն ու հմտությունները:

Կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մեջ ինքնուրույնության և նախաձեռնողականության զարգացումը էապես կախված է մեծերից, հարազատներից և ուսուցիչներից, ովքեր շրջապատում են երեխային:

Ինքնուրույնությունը տարրական դասարաններում բավականին մեծ դեր ու նշանակություն ունի:

Մանկավարժների առջև բավականին հստակ պահանջ է դրված, աշակերտների մեջ սերմանել ինքնուրույնությունը, նոր գիտելիքներ ստանալու և դրանք մշակելու ունակությունը, ստեղծագործական մոտեցում ցուցաբերելու հատկությունը, տարբեր աղբյուրներից ստացված գիտելիքները մշակելու, վերլուծելու և դրանք առանձնահատուկ կերպով կիրառելու ձգտումը:

Կարևոր խնդիր է նաև սովորեցնել երեխաներին ստեղծագործաբար մոտենալ առկա խնդիրներին՝ չվախենալով ուսման մեջ առկա դժվարություններից:

Ինքնուրույնության և ստեղծագործական հմտությունների ձևավորման և զարգացման մեջ հսկայական է ուսուցչի դերը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դասից դաս, դասարանից դասարան:

Տվյալ հետազոտական աշխատանքի շրջանակներում ես իմ առջև նպատակ եմ դրել ուսումնասիրել աշակերտների ինքնուրույնության, ստեղծագործականության խթանման գործընթացի առանձնահատկությունները: Այս նպատակի իրացման համար վեր են հանվել և առաջադրվել են հետևյալ կարևոր խնդիրներ.

- Ուսումնասիրել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման հիմնական մանկավարժական միջոցները
- Պարզել, թե ինչպես են ազդում ստեղծագործական խաղերը աշակերտների ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման վրա:

- Առանձնացնել այն խնդիրները և դժվարությունները, որոնք առաջանում են աշակերտների ինքնուրույնության խթանման գործում:
- Առաջարկել ինքնուրույնության և ստեղծագործականության խթանման ժամանակակից միջոցներ և եղանակներ:

Այսպիսով, հավելենք, որ դպրոցում՝ աշակերտների ինքնուրույնության խթանման առաջնային նպատակն է աշակերտի անձի և նրա ստեղծագործական ընդունակությունների զարգացումը: Այս նպատակի իրացմանն անհրաժեշտ է մոտենալ քայլ առ քայլ, կիրառելով տարբեր մանկավարժական միջոցներ, ուսուցման մեթոդներ և այլն:

# Աշակերտի ինքնուրույն գործունեության կազմաներպաման ձևերը

Երեխան ունի իր առանձնահատուկ տեսնելու, մտածելու և զգալու ունակությունները: Չկա ավելի հիմար բան,քան փորձել փոխարինել դրանք մեր ունակություններով (Ժան Ժակ Ռուսո):

Այժմ բոլոր ոլորտներում զարգացման տեմպերն արագանում են, այդ թվում նաև նկատվում է զարգացում կրթական համակարգում: Եվ անհաժեշտ է աշակերտին տալ հիմնարար գիտելիքներ և սովորեցնել ինքնուրույնություն: Այս համընդհանուր զարգացման աշխարհում առանձնահատուկ կարողություն է մարդու ինքնուրույնությունը, այն անձնայն որակ է: Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի աշակերտն ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ նրան այդ հնարավորությունը տալ:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը: Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուրույն ուսումնական աշխատանքները լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը՝ մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով:

**Ինքնուրույն գործունեության ձևավորում**

Երեխայի ինքնուրույն գործունեությունը ձևավորվում է դեռևս վաղ մանկության շրջանում: Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել աշխատել ինքնուրույն: Երեխայի ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դրսևորվում դասից դաս, դասարանից դասարան: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց , այն նպաստում է ինքնուրույության ձևավորմանը:

Աշխատանքային փորձը ցույց է տալիս, որ ճիշտ և պարբերաբար կազմակերպված ինքնուրույն աշխատանքի արդյունքում սովորողներն առավել խոր և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան այն դեպքում, երբ ուսուցիչն ինքն է մշտապես պատրաստի գիտելիքներ մատուցում:

Ինքնուրույն աշխատանքի շնորհիվ նորը ճանաչելու ցանկություն է առաջանում: Իսկ այդ ցանկությունը նպաստում է այն կարողությունների զարգացմանը , որոնք պարտադիր են ինքնակրթության և ինքնակատարելագործման համար:

Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար

կազմակերպման և տնային տարատեսակ ինքնուրույն աշխատանքների կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների , մտածողության զարգացմանը :

Ինքնուրույն աշխատանքի անցկացումն արագացնում է սովորողների գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը :

Տարբերակվում են աշակերտների ինքնուրույնության 4 մակարդակ

**I մակարդակ: Պարզ վերարտադրողական ինքնուրույնություն:**

Սա պահանջում է գիտելիքների պարզ վերարտադրություն, երբ սովորողները իմանալով կանոնները ,իրենց ձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը, ինքնուրույն լուծում են առաջադրանքը:

**II մակարդակ: Ընտրովի ինքնուրույնություն:**

Այս մակարդակում աշակերտը մի շարք կանոններից, օրինակներից կարողանում է ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքներ ինքնուրույն կատարման գործընթացում: Սովորողը կիրառում է մտավոր գործողություններ, համեմատություններ, վերլուծություններ և այլն:

**III մակարդակ: Մասնակի - որոնողական ինքնուրույնություն**:

Այս մակարդակում աշակերտը կիրառում է առավել ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք է բերել այլ առարկաների ուսուցման ընթացքում: Նա կարողանում է կատարել ինքնավերահսկում և ինքնագնահատում, կարողանում է ինքնուրույն պլանավորել և կազմակերպել իր աշխատանքը,սակայն դեռևս չի դրսևորում ստեղծագործական մոտեցում:

**IV մակարդակ: Ստեղծագործական – հետազոտական գործունեություն:**

Այս մակարդակում աշակերտը պետք է ունենա քննական միտք և ստեղծագործական մտածողություն:

Փորձը ցույց է տալիս որ ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որ այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն առաջադրանքը պետք է լինեն տարբերակված: Դրա համար անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի առանձնահատկությունները՝ հիշողություն, մտածողություն և այլն:

## Ինքնուրույն գործունեության տեսակները

Սովորողի մեջ ինքնուրույնություն զարգացնելու և խթանելու համար կարելի է օգտագործել հետևյալ աշխատաքային տեսակները՝ զույգով, խմբային, անհատական:

**1. Զույգով աշխատանք**

Տվյալ աշխատանքը իրագործելու համար կարելի է հանձնարարել հետևյալ առաջադրանքները՝

1. Յուրաքանչյուր աշակերտ կազմում է հատուկ հարցերով նախադասություններ (Special Questions or WH- questions) և այդ հարցերը հղում իր զույգին: Հարցերը պետք է հնչեն փոխադարձ, օրինակ՝

1.What is your name?

2.Where are you from?

3.When do you get up?

4.Why do you study English

5.When is your birthday?

2. Զույգերց յուրաքանչյուրը, տվյալ թեմայի բառապաշարի, գրավոր հարցում է կատարում, որից հետո փոխանակվում են լրացրած թերթիկներո և յուրաքնաչյուրը ստուգում է իր զույգի և՝ թարգմանությունը, և՝ ուղղագրությունը:

3. Զույգով կատարելու համար, շատ լավ և ոգևորող առաջադրանք - խաղ է Tic Tac-Toe -ն կամ այլ կերպ ասած՝ Noughts and Crosses: Կարելի է օգտագործել և՝ բառապաշարը ստուգելու, և՝ քերականական ստուգում անցկացնելու համար: Խաղ-առաջադրանքի կանոններն են՝ գծել ինը վանդակ պարունակող քառակուսի, այդ վանդակներում յուրաքանչուր աշակերտ պետք է այնպես տեղադրի իրեն բաժին ընկած պատկերը (այս դեպքում կամ X կամ 0 տարբերանշանը), որ ուղղահայաց, հորիզոնական կամ անկյունային գծով կարողանա հաղթել,բայց անհրաժեշտ է պատասխանել տրված վանդակի հարցին,որից հետո միայն կկարողանա լրացնել իր ընտրած վանդակում:

Օրինակ՝

Give the antonyms of these adjectives:

| | | |
|---|---|---|
| Short | Dark | Happy |
| Boring | Nice | Clever |
| High | Late | Big |
| Calm | Thick | Cheap |

2. **Խմբային աշխատանք**

Խմբային աշխատանքները խթանում են սովորողների միջև փոխհամագործակցությունը,միմյանց լսելու և կարծիքը հաշվի առնելու սովորությունը:Անգլերեն լեզվի դասավանդման գործընթացում այս մեթոդը նպաստում է ավելի թույլ աշակերտներին ևս դասապրոցեսի մեջ ներգրավելու, նրանց ավելի համարձակ և ինքնավստահ դարձնելու խնդրին:

Որոշ խմբային աշխատանքեր նպաստում են նաև սովորողի մեջ ստեղծագործական ունակությունների զարգացմանը և կարող են բացահայտել նրանց, մինչ այդ չբացահայտված, որոշակի կարողությունները և, ինչու՞ ոչ, շնորհը: Կան խմբային աշխատանքի համար նախատեսված տաբեր առաջադրանքներ՝

1. Ամենահաճախ օգտագործվող խմբային աշխատանքներից է՝պաստառ պատրաստելը: Ուսուցիչը դասարանը բաժանում է երկու կամ ավել խմբերի՝ ըստ նպատակահարմարության եվ աշակերտների քանակի: Յուրաքանչյուր խումբ ստանում է իր պաստառի թեման և վերնագիրը: Կախված թեմայի բարդությունից, ծավալից և բովանդակությունից, կարելի է հանձնարարել այն ավարտել մեկ դասաժամում կամ մինչև մեկ ամսում:Խմբի ներսում աշակերտները իրենք են աշխատանքի տարաբաշխում կատարում, իրենք ազատ են ինքնուրույն ընտրել մեթոդներ, որոնք կնպաստեն առաջադրանքի կատարմանը՝ այդպիսով զարգացնելով իրենց ինքնուրույնութունը:

2. Խմբային աշախատանքի համար նախատեսված առաջադրանքերից է նաև Last Man Standing (Reading) առաջադրանք-խաղը: Այն ակամա պարտադրում է դասի ժամանակ ներկայացվող տեքստին անշեղում ուշադրություն դաձնել: Այս մեթոդի առավելությունը կայանում է նրանում, որ ընթացքին կարող են մասնակցել բոլորը՝ անկախ իրենց առաջադիմությունից: Դասարանը բաժանվում է երկու խմբի: Խմբերը կանգնում են երկու շարքով դեմքով դեպի հակառակորդ թիմը: Առաջադրանքը կայանում է հետևյալում՝ տեքստը սկսում է ընթերցել առաջին խմբի առաջին

աշակերտը, նրան շարունակում է երկրորդ խմբի առաջին աշակերտը: Այդպես մինչև վերջին աշակերտը և մինչև տեքստի ավարտը: Այն աշակերտը, ով իր հերթին չկարողացավ շարունակել `նախադասությունը կամ բառը չգտնելու պատճառով նստում է: Հաղթում է այն թիմը ում մոտ տեքստի ավարտին կմնան ավելի շատ կանգնած աշակերտներ:




3. Secret Descriptions առաջադրանքը օգնում է կրկնել և վերհիշել ածականները: Այն նաև ոգևորում է սովորողներին: Այս առաջադրաքի էությունը կայանում է նրանում, որ աշակերտները, ոչ միայն կրկնում են քերականական նյութը, այլև փորձում են բնութագրել իրենց դասընկերոջը՝ հնարավորինս անկեղծորեն: Դասարանը բաժանվում է խմբերի, յուրաքնաչյուր խմբում աշակերտների քանակը պետք է լինի չորս կամ հինգ հոգի: Յուրաքնաչյուր խումբ ընտրում է մեկական աշաներտի, որին նկարագրելու է դասարանի առաջ՝ առանց այդ աշակերտի անունը բարձրաձայնելու: Մյուս խմբերը փորձելու են գուշակել՝ ում մասին է խոսքը: Ճիշտ գուշակող թիմը ստանում է մեկ միավոր: Բոլոր թիմերը հերթով ներկայացնում են իրենց աշակերտին և այն թիմը, որը կվաստակի երեք միավոր ճանաչվում է հաղթող:

4. **Անհատական աշխատանք**

Անհատական աշխատանքը թույլ է տալիս ավելի լավ ճանաչել աշակերտի թույլ և ուժեղ կողմերը, ավելի օբյեկտիվ գնահատում իրականացնել: Անհատական աշխատանքի նպատակն է սովորողի մեջ զարգացնել ինքնուրույնությունը, սեփական ուժերի և կարողությունների հանդեպ վստահությունը: Անհատական աշխատանքի ընթացքում սովորողը հնարավորություն ունի ինքուրույն մտածել և լուծել իր առջև դրված խնդիրը, այսպիսով ձեռք բերելով ինքնավստահություն: Անհատական աշխատանքներ են համարվում տնային աշխատանքները, դասարանում հանձնարարվող այն

առաջադրանքները, որոնք աշակերտը կատարում է միայնակ, ոչ զույգերով կամ խմբերով: Անհատական աշխատանքի առաջադրանքերը կարող են լինել, ինչպես ամբողջ դասարանի համար, այպես էլ յուրաքանչյուրի համար առանձին ընտրված՝ ըստ իրենց առաջադիմության, ունակության:

Այս մեթոդը իրագործելու համար կան տարբեր առաջադրանքներ՝

1. Կարդալ տեքստը
2. Թարգմանել պահանջվող նախադասությունը
3. Պատասխանել տեքստի վերաբերյալ հարցերին
4. Նախադասությունը դարձնել հարցական և ժխտական և այլն:

## Ստեղծագործական ունակություններ

Սովորողի ստեղծագործական աշխատանքը օգնում է ուսուցչին իմանալ ավելին աշակերտի զգացածի և մտացածի մասին: Ստեղծագործական աշխատանքը նաև նպաստում է աշակերտի մտավոր աճին՝ հնարավորություն տալով փորձարկել նոր գաղափարներ և խնդրի լուծման նոր հնարքներ:Այս մեթոդը օգնում է նաև դաստիարակել , զարգացնել և մոտիվացնել սովորողերին:

Ստեղծագործական աշխատանքները օգնում են սովորողներին արատահայտել իրենց անհատական ստեղծագործական առանձնահատկությունները և մտածել ու օգտագործել անգլերեն լեզուն ստեղծագործ մոտեցմամբ:

Նախքան մենք կսկսենք ուսումնասիրել որոշ թեորիաներ և պրակտիկաներ, ստեղծագործական մոտեցման ներառման մասին՝ անգլերեն լեզվի դասընթացի ժամանակ, եկեք հասկանաք, թե ինչու՞ համար արժե ներդնել այս բոլոր ջանքերը, ինչու՞ է ստեղծարարությունը կարևոր անգլերեն լեզվի դասապրոցեսում:

Օտար լեզվի օգտագործումը՝ ստեղծարար գործողություն է: Մենք արտահայտում ենք մտքերը լեզվի օգնությամբ՝ դարձնելով դրանք լսելի կամ տեսնելի: Մենք կարող ենք կազմել նախադադություններ, և անգամ երկար տեքստեր, որոնք երբևէ չենք տեսել կամ լսել: Սովորողներին ստեղծագործական վարժություններ տալով, մենք խթանում ենք նրանց լեզվի օգտագործման կարևոր հմտության մարզմանը: Այլ կերպ ասած՝ զարգացնում ենք նրանց ստեղծագործ միտքը: Ստեղծագործական աշխատանքը անգլերեն լեզվի դասավանդվող դասարաններում նպաստում է սովորողների միջև շփմանը և համագործակցմանը: Սովորողները օգտագործում են անգլերեն լեզուն՝ կատարելու համար ստեղծագործական առաջադրանք, այսպիսով օգտագործելով այն որպես գործիք: Սա նախապատրաստում է սովորողներին դասասենյակից դուրս լեզուն օգտագործելուն :

Ստեղծագործական առաջադանքները հարստացնում են դասարանական աշխատանքը ,այն դարձնում ավելի զանազան և հաճելի՝օգտագործելով անհատական տաղանդները , մտքերը և գաղափարները,ինչպես ուսուցչի, այնպես էլ սովորողի:

## Ստեղծագործական մտածողության մեթոդիկաներ

Ստեղծագործական մտածողության մեթոդիկաներ կամ ստեղծարարության մեթոդիկաներ, մեթոդիկաներ և տեխնիկաներ, որոնք նպաստում են յուրօրինակ մտքերի համախմբմանն ու նոր մտքերի ստեղծման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների և դժվարությունների համար նոր, յուրօրինակ մոտեցումներ և լուծումներ: Ստեղծագործական գործունեության մեթոդիկաներն օգնում են ավելի հստակ ձևակերպել խնդիրները, արագացնում են նոր գաղափարներ գտնելու գործընթացը, ինչպես նաև ավելացնում են դրանց քանակը, լայնացնում են խնդիրների վերաբերյալ արդեն եղած տեսակետները և ոչնչացնում իմացական արգելքները: Մեթոդիկաները որպես այդպիսին իրենցից ալգորիթմեր չեն ներկայացնում, որոնց հետևելով անպայման խնդիրների լուծումներ կարելի է գտնել, այլ տալիս են ուղղվածություն ու կարգուկանոն մտքերի ու գաղափարների առաջացման ու ուղղորդման համար: Մեթոդիկաները կրճատում են գաղափարների փնտրտուքի ժամանակը՝ կազմակերպելով և դարձնելով ավելի արդյունավետ բուն մտքերի որոնման գործընթացը: Գոյություն ունեն ստեղծարարությաան մեթոդիկաների հետևյալ ձևերը անհատական, խմբով կամ զույգերով :

1. **Անահատական ստեղծագործական աշխատանք**

Այն օգնում է սովորողին լինել ավելի ինքնուրույն և դրսևորել սեփական ունակությունները, հմտությունները տրված առաջադրանքը կատարելու ընթացքում: Աշակերտը ազատ է իր պատկերացումները, երևակայությունը և նախասիրությունները արտահայտելու հարցում:

2. **Զույգերով ստեղծագործական աշխատանք**

Այս մեթոդը զարգացնում է սովորողների մեջ ինչպես փոխհամագործակցության , այնպես էլ փոխզիջման ունակությունը:

Այսպիսի աշխատանքի ընթացքում սովորողները միասին են ընտրում գործիքները , որով աշխատելու են՝ լսելով միմանց կարծիքը: Երկուսով են կիսում պատասխանատվությունը՝ դրված նպատակին հասնելու գործում:

Զույգերով աշխատանքի առավելությունը կայանում է նրանում, որ սովորողները միմյանցից սովորում են նոր հմտություններ և ավելի զարգացնում իրենց ստեղծագործական միտքը: Ինչպես ասում են « Մի գլուխը լավ է, երկուսն ավելի»:

3. **Խմբային ստեղծագործական աշխատանք**

Այսպիսի աշխատանքները միշտ ընթանում են շատ ակտիվ: Ընթացքը լինում է երբեմն թեժ, քանի որ մասնակիցների քանակը շատ է,իսկ յուրաքանչյուր աշակերտ անահատ է: Նրանցից յուրաքանչուրը ունի իր երևակայությունը, իր ճաշակը ,իր մտահորիզոնը, իր նախասիրությունները: Այս մեթոդը աշակերտների միջև փոխհամագործակցության զարգացման, լավագույն միջոցն է: Ճիշտ փոխհամագործակցության շնորհիվ տրված առաջադրանքի արդյունքը լինում է շատ գոհացուցիչ:

“Learning gives creativity.Creativity leads to thinking.Thinking provides knowledge.Knowledge makes you great” Աբդուլ Քալամ:

Սովորողների մեջ ստեղծագործական ունակությունները զարգացնելու համար նախատեսված որոշ առաջադրանքներ

**Pictionary**: Այս առաջադրանքը ոչ միայն կհարստացնի սովորողի բառապաշարը ,այլ նաև կօգնի սովորողներին ՝ անակախ տարիքից, մի փոքր զվարճանալ: Առաջադրանքի էությունը կայանում է հետևյալում՝ գրել մի խումբ ազլերեն բառեր թերթիկների վրա, լցնել ինչ որ ամանի մեջ: Դասարանը պետք է բաժանել խմբերի, իսկ գրատախատակը այնքանմասի, որքան խումբ ունեք (իդիալական տարբերակում՝ 2 կամ 3): Անդամներից մեկը հանում է բառը և գրատախտակին նկարում է այն: Թիմերը պետք է կռահեն ինչ բառ է,և առաջինը գուշակած թիմը ստանում է միավոր:

**Role playing**: Դերախաղը հնարավորություն է տալիս սովորողին իր մեջ բացահայտել դերասանական ունակությունները: Մատուցվող տեքստը ավելի գրավիչ, հետաքրքիր է դառնում սովորողի համար: Անգամ թույլ աշակերտներն են ձգտում, թեկուզ փոքրիկ, բայց մասնակցություն ունենալ այս պոցեսին: Իսկ այն ավելի հետաքրքիր է դառնում երբ աշակերտները ոչ թե ընթերցում են իրենց խոսքերը, այլ՝ գրքից փորձելով կտրվել, անգիր են ասում, վերածելով փոքրիկ ներկայացման:

**Brainstorming:** Մտագրոհը նպաստում է սովորողի մեջ արագ կողմնորոշվելու ունակության զարգացմանը,բառապաշարը հարստացնելու խնդրին: Ուսուցիչը գրատախտակին գրում է անգլերեն մի բառ, աշաերտները սկսում են ասել բառեր, որոնք ասոցացնում են այդ բառի հետ: Ուսուցիչը գրի է առնում բոլոր հնչած բառեր՝ առանց քննդատելու:

## Գործնական համատեքստ

Հետազոտությունը կատարել եմ 4-րդ դասարանում, որտեղ սովորում են 9 աշակերտ: Որոշեցի բացահայտել աշակերտների ինքնուրույնությունը և դա իրականացրեցի մի քանի մեթոդներով:

Քանի որ բանավոր խոսքի զարգացումը շատ կարևոր է օտար լեզու սովորելու գործընթացում, ապա ես ընտրեցի «Իմ ընտանիքը» թեման և հանձնարարեցի յուրաքանչյուր աշակերտ 4-5 նախադասությամբ ներկայացնի իր ընտանիքը և կազմեցի «Family tree cards»: Աշակերտները այդ քարտերի միջոցով զարգացնում են նաև ինքնուրույն գրելու հմտությունները:

1-ին օրվա արդյունքների վերլուծություն

Հանձնարարված առաջադրանքը լրիվ կատարեցին 3 աշակերտ, մասամբ 6 աշակերտ:

2-րդ օրվա արդյունքների վերլուծություն

Մինչև վերջ կատարեցին 5 աշակերտ մասամբ 4 աշակերտ:

Ես կատարեցի նաև տեքստային աշխատանք և իմ նպատակն էր

1. Ինքնուրույն աշխատել տեքստի հետ, օգտագործել բառարաններ
2. Ճիշտ/ սխալ (տրվում է տեքստի բովանդակությանն առնչվող ճիշտ և սխալ

պնդումներ և առաջարկվում է տարբերակել դրանք)

3. Հնարավորինս կրճատել տեքստը, չխախտելով հիմնական բովանդակությունը
4. Թարգմանել տեքստը կամ որոշ հատվածներ:

Ես ընտրեցի «My family» տեքստը:


My family

This is my family. My mom is a teacher. She has got blue eyes and long, brown hair. She is beautiful. My dad is a firefighter. He is tall. He has got brown eyes. He is handsome.
I've got two sisters. Their names are Anna and Stacy.. They've got blue eyes. I love my sisters a lot. We've got a pet. It's a cat. It's got long tail and orange eyes. My family is awesome.

1. His mom is a _____.
2. Her eyes are _____.
3. She has got brown _____.
4. His dad is a _____
5. He has got _____eyes.
6. He is _____
7. He has got two _____.
8. They've got _____.
9. His pet is a _____
10. It's got long _____

1-ին օրվա արդյունքների վերլուծություն

Հանձնարարված առաջադրանքը ամբողջությամբ կատարեցին 4 աշակերտ, մասամբ 5 աշակերտ:

2-րդ օրվա արդյունքների վերլուծություն

Մինչև վերջ կատարեցին 6 աշակերտ մասամբ 3 աշակերտ:

Այս հետազոտության արդյունքում պարզեցի, որ այն աշակերտները որոնք ինքնավստահ էին ինքնուրույն կարողացան հաղթահարել իրենց առջև դրված խնդրիը: Դժվարացան այն աշակերտները որոնք ունեին բառապաշարի պակաս և կաշկանդվածություն օտար լեզվով հաղորդակցվելու և սխալվելու վախեր:

Հիմնավերում: Հետազոտության նպատակը աշակերտի համար դարձավ ուսման նկատմամբ հետաքրքության, ուշադրության, ինքնուրույն աշխատելու կարողության ձևավորում, որն էլ կյանքի համար կարևոր նախապայմաններից մեկն է:

Հետագա անելիքները: Որպեսզի աշակերտի մոտ ձևավորվի ինքնուրույնություն անհրաժեշտ է հանձնարարել գործնական բնույթի աշխատանք և թույլ տալ երեխային արտահայտվի, թեկուզ սխալ:

Պետք է ամեն կերպ ոգևորել աշակերտին, որպեսզի բարձրանա նրա ինքնավստահությունը և չունենա սխալվելու վախեր: Իսկ անընդհատ քննադատությունը տանելու է դեպի վատ արդյունքի: Երեխային պետք է տալ ավելի շատ ինքնուրույնություն, սխալվելու, սխալը վերլուծելու, հավատալու և դրա հիման վրա գիտելիքներ ձեռքբերմանը:

# Եզրակացություն

Ինքնուրույն և ստեղծագործական գործունեության ընթացքում սովորողների մեջ ձևավորվում են կարողություններ, ինչպիսիք են՝ ինքնուրույն հասնել արդյունքի, կանխատեսել նպատակին հասնելու ճանապարհին առաջացած խնդիրները և դրանց լուծման ուղիները, կարողանալ օգտագործել տեղեկատվական աղբյուրներ, գնահատել իրենց և ընկերների աշխատանքի արդյունքները, ձևավորել տեղեկատվություն որոնելուն և ընտրելու հմտություններ, սեփական գործունեության պլանավորման, գործողությունների քայլաշարը մշակելու և վերլուծելու, ցանկացած իրավիճակում կողմնորոշվելու հմտություններ:

Սովորողի ստեղծագործական աշխատանքը օգնում է ուսուցչին իմանալ ավելին աշակերտի զգացածի և մտացածի մասին: Ստեղծագործական աշխատանքը նաև նպաստում է աշակերտի մտավոր աճին՝ հնարավորություն տալով փորձարկել նոր գաղափարներ և խնդրի լուծման նոր հնարքներ:

Սովորողները օգտագործում են անգլերեն լեզուն՝ կատարելու համար ստեղծագործական առաջադրանք, այսպիսով օգտագործելով այն որպես գործիք: Սա նախապատրաստում է սովորողներին դասասենյակից դուրս լեզուն օգտագործելուն:

Օտար լեզվի օգտագործումը՝ ստեղծարար գործողություն է: Մենք արտահայտում ենք մտքերը լեզվի օգնությամբ՝ դարձնելով դրանք լսելի կամ տեսնելի:

Գալով մեր աշխատանքի եզրահանգմանը՝ պետք է շեշտել մի փաստ. Ինչպես, որ մայրն է ուրախանում, երբ իր երեխան սկսում է ինքնուրույն քայլել, այնպես էլ ուսուցիչը պիտի ուրախանա, երբ իր սանը դառնում է ինքնուրույն և համարձակ մտածող: Գիտությունը կարող է առաջ գնալ միայն մտքերի ազատ բախման ճանապարհով: Ահա, թե ինչու ուսուցիչը պիտի երեխայի համար նախ մտածելու լայն հնարավորություն ստեղծի:

Մեր կատարած ուսումնասիրության հիման վրա եզրակացրել ենք հետևյալները.

- Ինքնուրույնությունը յուրաքանչյուր մարդու կյանքում թերևս ամենակարևոր գործոններից մեկն է: Ոչ բոլոր աշկերտներն են, որ կարող են դառնալ գիտնականներ, բայց դառնալ ինքնուրույն մարդ անհրաժեշտ է: Իսկ ուսուցչի գերխնդիրն է նպաստել երեխաների մեջ այդ որակի զարգացմանը:
- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար

անցկացնելով՝ սովորողները առավել խորը և ճկուն գիտելիք են ձեռք բերում,քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:

- Սովորողների ինքնուրուրույն ուսումնական գործունեության համար

նախատեսած առաջադրանքների բնույթը անհրաժեշտ աստիճանաբար բարդացնել:

- Չի կարելի թույլ ընդունակություններով աշակերտներին անընդհատ

առաջադրել դյուրին առաջադրանքներ: Դրա հետևանքով կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է սկզբում աշխատի ներառել պարզ առաջադրանք, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծի առավել բարդ նյութեր:

- Ինքնուրույն աշխատանքների համար նախատեսված առաջադրանքները

պետք է աշակերտներից պահանջեն կամային ջանք, առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:

- Անհրաժեշտ է դպրոցում ստեղծել այնպիսի իրադրություն, որ երեխան ձգտի

ինքնուրույն հասնել դրված նպատակներին, յուրացնի իր համար մատչելի գործելու միջոցները, հնարները և ամենակարևորը՝ սովորի իր առջև որևէ ինքնուրույն նպատակ դնել և լուծել առաջադրած խնդիրը:

- Դպրոցը պետք է սովորեցնի աշակերտին լուծելու զանազան պրպտողական,

ճանաչողական և գործնական խնդիրներ: Դպրոցում պետք է ուսուցանել խնդրի լուծման այնպիսի մեթոդներ և հնարներ, որոնք այսօր համագործակցային ուսուցման բովանդակությունն են կազմում, որպեսզի աշակերտը պատրաստ լինի կյանքում նոր խնդիրների ինքնուրույն լուծմանը:

Ուսուցիչը չպիտի բավարարվի աշակերտին պատրաստի գիտելիքներ մատուցելով, չէ որ պատրաստի գիտելիքների մեքենայաբար ընկալումը միակողմանի և կրավորական գործողություն է և շատ քիչ է նպաստում ինքնուրույն մտածելու ունակությունների զարգացմանը:

Երեխան պիտի իմանա ցանկացած երևույթի պատճառն ու հետևանքը: Դա գիտելիքի գիտակցված յուրացման լավագույն միջոցն է: Դա կօգնի աշակերտին երազել, հայտնագործել և ապագայում գիտնական, գյուտարար և արվեստագետ դառնալ:

Եվ յուրաքանչյուր ուսուցիչ պետք է հիշի, որ հենց աշակերտական նստարանին է ձևավորվում ապագա մտածողն ու ստեղծագործողը…

## Օգտագործված գրականության ցանկ


1. Ներառական կրթության իրականացման ուղեցույց (հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների համար), Երևան, 2008:
2. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան – Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ «Զանգակ» հրատարակչություն - 2014 թ
3. Чекалева Х. В. Соврименные теории и технологии образования. – Омск, 1993.
4. www.zangak.am
5. https://multiurok.ru/